ուսումնարանի շինութեան համար քաղաքային հողից յարմարաւոր և վայելուչ տեղ, իսկ շինութեանը նպաստամատոյց հանդիսացան եղբարք պ. պ. Լալայեանք և Քալանթարեանք։

Իսկ ինչ որ վերաբերում է վանքի շինութեանը, որ դեռ սկսած էլ չէ, սորա համար աշխատել է նոյնպէս մեր նախկին առաջնորդ Դանիէլ Արքեպիսկոպոսը, որ արժանայիշատակ Մատթէոս կաթողիկոսի թոյլտուութեամբ ժողովել էր նուէրք հազար րուբ. չափ. այդ գումարը երկար ժամանակ մնալով Արքունի բանկում աճել է և հասել մինչև 2000 ր., այժմ այս պատրաստի և ուրիշի աշխատած գումարը մեր քաջագործ Թադէոս եպիսկոպոսը ծախս է անում աննպատակ և անօգուտ կերպով և ժամանակին յայտնի կը լինեն վնասները։

Մեր սրբազանը, այո, ունի և գեղեցիկ յատկութիւններ. Նա չափազանց բարեսիրտ է և միանգամայն միամիտ. Նա շատ սիրում է հանգիստ ապրել. իսկ ազգային գործերը, եկեղեցիների և եկեղեցականների բարեկարգ կառավարութիւնը և պահպանութիւնը թողած է իր գիտնական վարդապետի անգէտ կառավարութեան։

Ցիշեալ վարդապետը այն աստիճան բանացել է խեղճ քահանաների վրա, որ մի ամենաչնչին զանցառութեան համար նրանց փիլոնը վեր է առնում առանց կոնսիստորիայի գիտութեան կամ Սինոդի իրաւասութեան. Նա զրկում է քահանաներին քահանայագործութեան իրաւունքից որքան ժամանակ կամենում է, և առանց փիլոնի կանգնեցնում է եկեղեցու դրանը։ Սորա բանութեանը ենթարկվում են նոյն իսկ կոնսիստորիայի անդամները, որոնց իր իրաւունքով պատժում է, ինչպէս հասարակ քահանաներին և կանգնեցնում է անփիլոն եկեղեցու դրանը։ Սորանից կարելի է նկատել, թէ, կոնսիստորիայում գործերի ընթացք տալու ժամանակ, այդ խեղճ անդամները ինչ նշանակութիւն և և ձայն կունենան և թէ ինչպէս է պահպանվում օրէնքը և կարգը։—Մի յայտնի իրողութիւն. յունիսի 29-ին սրբազանը իր վարդապետի թելադրութեամբ, ընդդէմ կարգի, ինքնագլուխ կնքում է մայր եկեղեցու երեցփոխի դրամարկղը և մի քանի օրից յետոյ հրաւիրում է ժողովրդին ընտրել երեցփոխան պ. Խլափեանցի տեղ, որի ընտրութեան երեք տարի ժամանակը դեռ ևս լրացած չէ։ Հրաւիրված ժողովրդից ներկայանում են միայն 20 հոգի, որոնք բաժանվում են երկու կուսակցութեան, մի կողմը պահանջում է բացատրել Խլափեանցի յանցանքը իր պաշտօնի մէջ, և եթէ յանցաւոր է, ապա ընտրութիւն անել։ Բայց մեր խաղաղասէր սրբազանը, չը նայելով Վեհափառ Հայրապետի հեռագրին, որով պատուիրել էր դադարեցնել ընտրութիւնը մինչև գործի հանգամանքի պարզվելը, փողոցներում ստորագրել է տալիս ընտրողական թղթին, ծուռ հասկացնելով թէ պ. Խլափեանցը հրաժարական է տուել, իսկ Վեհափառին պատասխանում է, որպէս թէ ժողովուրդն է ընտրութիւնը արել և ինքը ամենևին չէ մասնակցել։ Ի հարկէ այդ ամենը նրա վարդապետի գործունէութեան արդասիքն են, որ գցել է ժողովրդի մէջ վրդովմունք, խռովութիւն և կազմել է քաղաքում զանազան կուսակցութիւններ։ Այդ ամենի հետևանքը ինքն ըստ ինքեան յայտնի է, թէ ինչ կը լինի։ Վերջապէս շնորհիւ սրբազանի և նրա վարդապետի խարդախները յաղթող են հանդիսանում, զրկում են պ. Խլափեանցին երեցփոխանութեան պաշտօնից։ Այդ ամեն իրողութեանց մասին հեռագիրներով և խնդրագիրներով յայտնված է Նորին Վեհափառութեան, բայց թէ ինչ ելք կունենայ գործը, դեռ անյայտ է։

Մի հայ

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

Օգոստոսի 10

Զարհուրելի և անբնական դրութիւնը մեր հայց, մարց, եղբարց ու քոյրերի Թիւրքաց Հայաստանում, որը պատկերացրած էր թանձր և սև ներկերով ձեր պատուական լրագրի 115 համարում «Հրաւէրք» գլխագրով, յիշեցրուց մեզ մեր պարտաւորութիւնը դէպի հայերը, որոնք բնակվում են մեզանից հեռու և պահպանում են հայրենեաց սուրբ օրօրոցը։ Կարող ենք արդեօք ազնուապէս հպարտանալ բնակվելով Աստրախան ճոխութեան և չքեղութեան մէջ մոռացած բոլորովին մեր քաղցած եղբայրներին և քոյրերին, ոչ. մենք այն ժամանակ կը լինէինք արժանի աւելի քան յանդիմանութեան։ Վասնորոյ, մենք՝ Եղիսաբէթ Զաքարեան Պօպօվեա ց և Հռիփսիմէ Գաբրիէլեան Կազաչկեանց վճռեցինք, առանց յետաձգելու օգնել նրանց մեր կարողութեան և միջոցի չափ և ահա հանգանակած գումարը չորս հարիւր և ութսուն րուբլի (480 ր.) ուղարկելով ձեզ Յովհաննէս Գէորգեան Կիտայեանցի ձեռամբ, խնդրում ենք ճանապարհել ըստ պատկանելոյն և 'ի միամտութիւն բազմաց հրատարակել նուիրատուաց անուններն ձեր թերթի մօտակայ համարներից մինում. հանգանակութիւնը դեռ շարունակվում է։

Ահա նուիրատուների անունները։ Սօֆիա Յովհաննէսեան Բեգլարեանց 100 ր., Եղիսաբէթ Տէր-Զաքարեան Պօպօվեանց 25 ր., Ծաղիկ Յակովբեան Պօպօվեանց 25 ր., Մարիամ Յովհաննէսեան Պօպօվեանց 25 ր., Մարիամ Գրիգորեան 2 ր., Ուստինեայ Սարգսեան Պարանով 1 ր., Սողոմի Զաքարեան Տէր-Սիմէօնեանց 5 ր., Անյայտուհի 1 ր., Անյայտուհի 5 ր., Ծաղիկ Միքայէլեան Ասատուրեանց 10 ր., Եղիսաբէթ Յարութիւնեան Ասատուրեանց 5 ր., Կարապետ Արտեմով 20 ր., Զաքարիա և Սիմէօն Սուրաբէկեանց 10 ր., Օվսաննա և Եղիսաբէթ Հախվերդեանց 15 ր., Աննա Փարսադանեանց 10 ր., Անյայտուհի 3 ր., Եղիսաբէթ Ջիմշիդեանց 5 ր., Մաքթաղին է Սարհադեանց 5 ր., Շուշան Ֆրանգուլեանց 3 ր., Մարիամ Ֆրանգուլեանց 3 ր., Սօֆիայ Ֆրանգուլեանց 3 ր., Աննա Կիտայեանց 10 ր., անյայտուհի 1 ր., Եկատերինա Յովհաննէսեան Ջանումեանց 10 ր., Եղիսաբէթ Ազամջանեանց 10 ր., Եղիսաբէթ Ֆրանգուլեանց 5 ր., Մաքթաղինէ Սարգսեանց 5 ր., Ովսաննայ Սարգսեանց 5 ր., Եկատերինա Յակովբեան Կազաչկեանց 10 ր., Եղիսաբէթ Գալստեան Մարտիրոսեանց 3 ր., Դարիա Դաւիթեան Սարգիսեանց 3 ր., Եկատերինա Սարգսեան Սարգսեանց 1 ր., Հռիփսիմէ Յովհաննէսեան Սարգսեանց 8 ր., Աննա Գրիգորեան Ֆաբրիկեանց 3 ր., Եկատերինա Մկրտչեան Պօպօվեանց 3 ր., Եկատերինա Յովակիմեան Պօպօվեանց 5 ր., Ռիփսիմէ Կազաչկեանց 10 ր., Անյայտուհի 5 ր., Անյայտուհի 3 ր., Անյայտուհի 2 ր., Եղիսաբէթ Թէլէթեանց 5 ր., Անյայտուհի 3 ր., Մելանիա Սունդուկեանց 3 ր., Գաբրիէլ Բուրջալեանց 3 ր., Ոսկի Կարապետեան Մուղդուսեանց 3 ր., Մաքդաղինէ Գալստեան Լալայեանց 3 ր., Եղիսաբէթ Գալստեան Սահրադեանց 2 ր., Եղիսաբէթ Բարխուդարեանց 3 ր., Եղիսաբէթ Լիսիցինեանց 2 ր., Մելանիա Սիմէօնեան Աբզարեանց 5 ր., Եղիսաբէթ Յարութիւնեան Աբզարեանց 3 ր., Գայանէ Սարգսեան Աբզարեանց 3 ր., Գայանէ Մկրտչեան Միզանդարեանց 3 ր., Եղիսաբէթ Միզանդարեանց 5 ր., Անյայտուհի 1 ր., Եղիսաբէթ Աստուածատրեան Ջիմշիդեանց 2 ր., Անյայտուհի 1 ր., Յակովբ Մախմուրեանց 2 ր., Յովհաննէս Յակովբեան Ջախմախսազեանց 7 ր., Մարիամ Մարտիրոսեան Կիտայեանց 10 ր., Եկատերինէ Գէորգեան Թէլէթեանց 10 ր., Թագուհի Գէորգեան Մեհրաբեանց 5 ր., Մարթա Ստեփանոսեան Աւետեանց 2 ր., Անյայտուհի 1 ր., Մարիամ Յակովբեան Զարգիչեանց 10 ր.։

Այդ հանգանակութեան գումարն է չորս հարիւր և ութսուն րուբլի (480 ր.) որը խնդրեմ ստանալ սոյն ծրարեալ տոմսակի № 474 համարաւ Թիֆլիսի Թագաւորական Բանկից։

Յ. Գ. Կիտայեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 22 օգոստոսի

Տասն ամիս է, որ մենք երեսփոխանի պաշտօն ենք վարում Թիֆլիսի «Զօրաբաշի ս. Գէորգ» եկեղեցում։ Թէ ինչ ենք արել այդքան ժամանակվայ ընթացքում և ինչ ենք անում, դորա մասին աւելորդ ենք համարում խօսել։ Այսքանը միայն կասենք, որ եկեղեցին և նորա գաւթում գտնված համանուն ծխական դպրոցը մեր հոգացողութեան գլխաւոր առարկաներն են եղած միշտ և են։

Եկեղեցին որ մի խարխուլ շինութիւն է, վաղուց գրաւում էր իր վրա մեր ուշադրութիւնը. և մենք նորա վերանորոգման նպատակն իրագործելու համար՝ մեր ձեռքից եկած աշխատանքը չենք խընայել և չենք խնայում։—Գալով ուսումնարանին պէտք է ասել, որ ոչ տեղի դիրքը, ոչ եկեղեցու գաւիթը և ոչ դպրոցական սենեակը ամենևին ուսումնարանի յարմարութիւն չունեն։ Ուստի մենք մօտ օրերումս մտադրված էինք՝ թէ եկեղեցու տանիքի հարկաւոր կարկատաններն անելու և թէ ուսումնարանը տեղափոխել Հաւլաբարի մի կենտրոնական տեղում և յարմարաւոր բնակարանում, որի համար և հարկաւոր բանակցութիւններն ըսկսել ենք՝ ում հետ հարկն է։

Բայց մենք այս համառօտ տեղեկութիւնը տալինք միայն պատճառով, որ մեր ասածները փոքր ի շատէ կապ ունեն ձեր լրագրի № 145-ում ներքին լուրերի մէջ տպված հետևեալ տողերի հետ.—«Զօրաբաշու ս. Գէորգ եկեղեցու գմբէթից այս օրերս երկու աղիւսներ վայր ընկան և վիրաւորել են մի քանի աշակերտներին, որոնք գաւթում խաղալիս են եղել։ Պ. Յ. Նազարեանցն է երեցփոխան այդ եկեղեցու. մի և նոյն ժամանակ այդ եկեղեցու դպրոցի ուսուցիչն է»։

Այդ տեսակ բան չէ եղած։ Մէկ որ՝ մեր եկեղեցին կրամիտով է ծածկված, չէ թէ աղիւսով. երկրորդ՝ որ՝ կրամիտները գիշերով վէր ընկան, ուրեմն աշակերտներ չէին էլ կարող գտնվել գաւիթում։

Գալով լուրի այն մասին, ուր ասված է, թէ մենք մի և նոյն ժամանակ այդ եկեղեցու դպրոցի ուսուցիչ ենք,—այդ սուտ է։ Մենք այնտեղ ուսուցիչ չենք։ Սորան էլ կը վկայեն ոչ միայն ծխական վերատեսուչը՝ այլ և նոյն դպրոցի ուսուցիչները ու աշակերտները և նոյն եկեղեցու քահանան ու ժամկոչը։

Յ. Նազարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 26-ին, վաղ առաւօտեան, քաղաքիս Հաւլաբար ասված բաժնի պօլիցիականները գտան Հաւլաբարի մայդանի մի պատի անկիւնում մի նորածին մանուկ։ Պօլիցիականները իսկոյն տարան երեխային և յանձնեցին մի կնոջ, որ պահէ, մեծացնէ իր համար երեխային։

ՆՈՒԽՈՒՑ յայտնում են, որ պօլսեցի յայտնի դերասան պ. Ագամեանը իր խմբով դիտաւորութիւն ունի այդ քաղաքը գալ։ Նամակագիրը յայտնում է, որ յաջողութիւն չէ կարող գտնել, որովհետև նուխեցիք չափազանց անտարբեր են դէպի բեմական արհեստը, և այժմ զուարճանում են մի ձեռնածուի ֆօկուսներով, որ Արելի աշակերտն է։

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ մեզ գրում են. «Հունձքը այս տարվայ մի քանի չոր օրերի պատճառով անաջող եղաւ և ինչպէս երևում է էժանութիւնը հացի վրա այս տարի էլ լինելու չէ։ Այս տարվայ աննշան ցանքերից գոյացած արդիւնքով անցեալ տարվայ իր պարտքերը վաճառականին վճարելով, գիւղացուն շատ քիչ հաց կը մնայ և նա դարձեալ ստիպված կը լինի այս տարի էլ իր ցորենի պաշարի մեծ մասը վաճառականներից գնել»։

ՕՐԴՈՒԲԱԴԻՑ մեզ գրում են, որ օրերումս քաղաքի բնակիչները ընտրելով իրանց համար մի արժանաւոր և ժամանակիս պահանջներին յարմար քահանայացու, արդէն խնդիրքով դիմել են ուր հարկն է, որպէս զի շուտով իրանց ընտրածը ձեռնադրվի։ Թղթակիցը յոյս ունի, որ հոգևոր իշխանութիւնը ուշադրութիւն կը դարձնէ օրդուբադցիների խնդրքի վրա, որոնք 6 տարի առանց քահա-

---

քահանաներին հաւաքէ բոլորին ի միասին և ուղարկէ Տաճկա-Հայաստան անգլիական միսիօնարների դէմ մրցելու։

Դարձեալ փաստ։

Մի խօսակցութիւն երկու «պամպուլիկների» մէջ։

—Կարդացի՞ր հայ-աւետարանականի նամակը «Մշակի» մէջ։

—Կարդացի, ինչպէս չէ։

—Տեսա՞ր որ՝ «Մշակը» բողոքական է դարձել։

—Հա, «Մշակը» բողոքական է դարձել։

—Հարկաւոր է անշուշտ այսպէս հասկացնել ժողովրդի գռեհիկ դասակարգին։

—Հա, հարկաւոր է անշուշտ այսպէս հասկացնել ժողովրդի գռեհիկ դասակարգին։

—Գուցէ այս միջոցով հնար լինի վնասել «Մշակի» ժողովրդականութեանը։

—Այո, գուցէ այս միջոցով հնար լինի վնասել «Մշակի» ժողովրդականութեանը, թէ չէ ուրիշ միջոց չը կայ։

—Ուրեմն գրենք մեր «պառաւ աղուէսին», որ այս կրօնական հարցի մասին միշտ գրէ ու գրէ։

—Անպատճառ. գրենք մեր «պառաւ աղուէսին», որ այս մասին միշտ գրէ ու գրէ։

Ողորմելի կարճամիտներ....

Մի քանի օրից յետոյ գրվում և ուղարկվում է Թիֆլիս մի նամակ հետևեալ բովանդակութեամբ։

Մեծապատիւ «պառաւ աղուէս»։

«Սրբազան պարտականութիւն ենք համարում այս նամակաւ ուղարկել ձեզ մեր մեծ շնորհակալութիւնը։ Դուք էիք, որ մեր ազգային միութիւնը երկպառակտողների դէմ քաջ ախոյեան հանդիսացաք և չը թողիք, որ մեր եկեղեցին քանդէին։ Հաւատացէք, եթէ դուք չը լինէիք, հիմի մեր եկեղեցին վաղուց քանդած, հիմն ի վեր տապալած կը լինէին և մենք էլ հայութիւնից դուրս եկած, առաջվայ նման էլի «հին-իսրայէլացի» եղած կը լինէինք։ Ինչպէս ուրիշ ազգային ծառայութիւնների մէջ էլ, զօր. նուիրատուութիւններ հաւաքելու, ժամանակակից նոր մտքեր արտայայտելու, ազգայնութեան գաղափարը ազգի մէջ արծարծելու և ազգի անջատված մասերը ի միութիւն հրաւիրելու, և այլն,—ինչպէս որ այս ամեն ազգօգուտ հարցերի և խնդիրների մէջ, կրկնում ենք, միշտ սկզբնապատճառ և հերոս էք հանդիսացել, այս հարցի մէջ էլ կրկին ցոյց տուիք ձեր վառ ազգասիրութիւնը և տիրացուական հայեացքները։ Ինչպէս կարելի է մոռանալ ձեր արած այս մեծ, մեծ ծառայութիւնները, մանաւանդ մեր մանուկ գրականութեան ցոյց տուած ծառայութիւնը։ Դուք շատ մեծ զարկ տուիք մեր գրականութեանը։ Չը նայելով, որ քսան տարվանից աւելի է հրատարակում էք, և ահա բաւականին յետադիմութիւն էք արել առաջադիմութեան մէջ։ Շարունակեցէք, շարունակեցէք անդադար գրել, գիշեր ու զօր այս կրօնական հարցի մասին գրելուց չը դադարել և հաւատացած եղէք, որ ձեր անոխակալ գրուածների համար կարդացողներից միշտ այսպէս մեծ մեծ շնորհակալութիւն կը ստանաք և հռչակդ էլ չափից դուրս կը բարձրա....Բայց ափսոս որ ձեր չարաբաստիկ աստղի տակ ծնվելը մեծ արգելառիթ է դառնում այս բարձրանալուն։ Այս չարագուշակ դժբաղդութիւնը ձեր գլխից հեռացնելու համար, առաջարկում ենք ձեզ հետևեալ բարեկամական խորհուրդը։ Դիմեցէք մի աղերսագրով Սուլթան-Համիդի հմայող—աստրօլօգներից մէկին և թախանձեցէք նրան որ մի դիւթական զօրութեամբ չարաբաստիկ աստղը հեռացնէ ձեր գլխից և նրա տեղ մի բարեբաստիկ աստղ զետեղէ։ Թէ չէ, որքան էլ ճշմարտութիւններ քարոզէք, ապերախտ մարդիկը թոյլ չեն տայ իրանց հաւատալ ձեր խօսքերին և դուք էլ միշտ յետ ու յետ կը գնաք, քանի որ այդ Թշուառական աստղի տակ էք....»

Ստորագրված են՝ ընդունակ յետադիմական Զ. և ուրիշները։

Էլի փաստ։

Թէ ինչպէս է խօսում տէրը իր ստրուկների հետ—պ. Թաղապետներ, էս դո՞ւք էք հաստատել թէ՝ հասարակական գործողների հետ վարվում են այնպէս, ինչպէս վարվում է հովիւը ոչխարներին փարախի մէջ ներս անելիս։

Ո՛չ, ո՛չ, թող ասեն, դուք միք հաւատայ, թէև մենք ենք ստորագրել մեր կամքով։ Այսինքն մենք չը գիտէինք թէ՝ այդպիսի տիրական ձեռվ կը խօսէին մեզ հետ, այդպէս սաստիկ կը բարկանային մեր վրա, թէ չէ „խալթ կանէինք“ չէինք հաստատի. խօ դուք արդէն համոզված էք, որ ձեր ստուերն անգամ ահարկու է մեզ համար։

—Հապա դուք ինչպէս համարձակեցաք... և այս խօսքերից յետոյ բանտի սպառնալիք, ոտքի գփրտոց և ահա մեր քաղաքային շահեր պաշտպանող պարոնները բոլորը փախչում, թագչում են մի անկիւն։

Ի դէպ է այստեղ, ընթերցող, մէջ բերել մի առակ, որ շատ յարմար է մեր հասարակական գործողների վերաբերութեամբ։

Մկները բոլորովին ձանձրացած և յուսահատ կատուի հալածանքներից, հաւաքվեցին մի օր, ժողով կազմեցին, խօսեցին, խորհուրդ արին, խորհեցան երկար ու բարակ, որ մի զանգակ կախ տան կատուի վզից, որ նրա գալը առաջուց իմանան և չը բռնվին։ Խորհրդի ժամանակ բոլորն էլ քաջ էին ձևանում և պռատ, պռատ անում, բոլորն էլ պատրաստականութիւն էին յայտնում զանգակը կախ տալու։ Այսպէս պատրաստվում են և սպասում են կատուի գալուն։ Եւ ահա յանկարծ երևում է մռռան կատուն և մեր քաջ մկները ամենը փախչում են մի ծակ սրտապատառ։

—«փաստերդ էլ մթին, փաստերդ էլ վարագուրված...»—մռմռում է քթի տակ անողոք ընթերցողը։ Ներեցէք, ընթերցող, սրանից աւելի պարզաբանելու գրիչս ապստամբում է ինձ դէմ։ Շատ անգամ բանն այն չէ պարզ գրեն, այլ պարզ հասկանան. ըստ որում մեզանում դեռ փշով ու տատասկով է ծածկված գրականական ասպարէզի մէջ այն ուղին, որ կոչվում է հարուածողական։

Յեղացի